




ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 163

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ
ՏՈՒՐԻ
ԿԵԿԵ

ՏՕՆԱՑՈՅՑ

Սեպտ.	6	†	Կիր.	թի.	Գ. զկնի վերափոխման :
	7		Բշ.	զմ.	Ա. or պահոց Ս. հաչին :
	8	†	Գշ.	զկ.	Ծնունդ Ս. Աստուածածնի : Եւ Բ. or պահոց Ս. հաչին :
	9		Դշ.	դմ.	Գ. or պահոց Ս. հաչին :
	10		Եշ.	դկ.	Դ. » » »
	11		Ուր.	ամ.	Ե. » » »
	12		Շր.	ակ.	Նաւակահիք »

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ց

ԽԱԶԻԿ Վ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Տպ. «Կ. Արձագանգ» ի: Գիւն 3 դահեկան :

Կը վաճառուի Բերա, Պայրամ փողոց թիւ 5

Կալաթա, Սեղբոս խան Մխիթարեանց գրատունը :



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Չորրորդ տարի ⑤ 5 Սեպտեմբեր 1914 ⑤ Թիւ 163

«Սրբազան Բանաստեղծական Պիոս Ժ. կր մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
բաթական Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
ռուցէ, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն որակին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Դամակ Կարգ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Բ. Թեղեմա Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 բռնամատրաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ԱԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ԻՆՔՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Ն. Ս. ՊԻՌՍ Ժ.Ի

ՍՈՒՐԲ ԹՈՎԱՄԱՍՈՒ ՈՒՍՄԱՆ ՎՐԱՅ

ԻՏԱԼԻՈՑ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԿՂՋԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

(Շաբ. եւ վերջ)

Սակայն, որպէս զի այս գիտութիւնը մը-
շակուի աւելի խորապէս, ինչպէս մշակուե-
լու է Համալսարաններու և մեծ Աթէնէոննե-
րու մէջ, ինչպէս նաեւ այն ամէն Ընծայա-
բաններուն և Հաստատութիւններուն մէջ ո-
րոնց շնորհիւ ամ է ակադեմական աստիճան-
ներ տալու իշխանութիւնը, բացարձակա-
պէս պէտք է որ, դառնալով հին սովորու-

թեան, տեղի ունենան նոյն իսկ Աստուծա-
բանական բովանդակութեան վրայ դասըն-
թացներ, նաեւ ա'յս պատճառաւ որ այս
գրքին մեկնութիւնը աւելի զիւրըմբռնելի
պիտի ընէ և լուսաբանէ ուսուցանող եկե-
ղեցւոյ հանդիսաւոր Վճիռները և անոնց հե-
տեւող գործերը: Որովհետեւ Սուրբ Վար-
դապետին երանաւէտ մահէն հետքը եկեղեցին
ժողով մը գումարած չէ որուն սնն ալ ներ-
կայ չըլլայ իր վարդապետութեան ճոխու-
թիւններով, Որովհետեւ այնքան դարերուն
փորձը ցոյց տուած է, և օրէ օր աւելի յայտ-
նի կ'ըլլայ թէ ո'րքան ճշմարիտ էր Մեր Նա-
խորդ՝ Յովնաննէս ԻԲ. ի սա խօսքը.¹ Անի-
կայ (Թովմաս) միայն՝ բոլոր վարդապետներէն
աւելի յուսաւորեց եկեղեցին, եւ անոն զրիւհեմ,
մեկ տարուան մէջ, մարդ աւելի օգուտ կը ֆա-

(¹) Alloc. hab. in Consistorio an MCCCXVIII.

դի Բան և Բաններուն վարդապետութիւններէն՝ իր
ստորոգ կեանքին մէջ: Ս. Պրոս Ե. երբ որո-
շեց որ Ս. Թովմաս իբրեւ վարդապետ տոն-
ուելու է ամբողջ Եկեղեցւոյ կողմէ, հաստա-
տեց այս գաղափարը հետեւեալ խօսքերով.
Որովհետեւ ստեղծարար Աստուծոյ Նախախնա-
մութիւնը այնպէս ըրած է որ հրեշտակային
Վարդապետը, իր վարդապետութեան գործութեան
նախաձեռնութեամբ, երկիւնք մեծ վայրկեանէն,
ցրուած է, զանոնք ստորաւար ընկերով եւ հեր-
բերով, այն բազմաթիւ հերետիկոսութիւնները որ
սպա երեւան եկած են, ինչպէս առաջ յաճախ
սեղան եւ ինչպէս վերջերս Տրիդենտեան Ժո-
ղովին սուրբ Վեհաժողովուն մէջ ակնհայտ ճշ-
տեղեցաւ, կը հրաւիրենք որ յիշատակը սուրբ
Վարդապետին, որուն արդիւնքները կ'ազատեն
սակեւ օր զիւրեք ժամէ մոլորութիւններէ
առաջուրեւ աւելի ջերմեանով եւ երախտա-
պարտ արեւ թիւսած պաշտօնունքի մը առաջ-
կայ ըլլայ: ¹ Մեզի հաճոյ է նաեւ, թողլով
Մեր Նախորդներուն միւս այնքան բազմա-
թիւ եւ այնքան փայլուն գովեստները, ամ-
փոփել Բենեդիկտոս ԺԴ.ի սա խօսքերուն
մէջ ամբողջ գովեստները Սուրբ Թովմաս
Ագուլինացիին գրուածքներուն, մանաւանդ
Աստուածաբանական բովանդակութեան, «Բազ-
մաթիւ հոռմէական Բաճարապետներ, Մեր
Նախորդները, անոր վարդապետութեան
պատուաբեր վկայութիւններ տուած են: Եւ
Մենք եւս, Մեր այլեւայլ նիւթերու վրայ
գրած գիրքերուն մէջ, երբ զայն խնամով
քննելով հրեշտակային Վարդապետին գա-
ղափարը ամփոփեցինք եւ նկատի առինք, միշտ
լի հիացումով եւ զարմացումով, անոր յարե-
ցանք եւ հաւանեցանք, անկեղծօրէն խոստո-
ւանելով որ եթէ նոյն գիրքերուն մէջ լաւ
բան մը կայ, բնաւ մերը չէ այն, այլ սմ-
բողջ վերագրուելու է այնքան մեծ ուսու-
ցիչի մը»: ²

Ասոր համար «որպէս զի Սուրբ Թովմասի
մաքուր եւ անարատ վարդապետութիւնը
ծաղկի դարձցնելուն մէջ, ինչ որ մեր ամե-

նամեծ բաղձանքն է» եւ անհետ ըլլայ «ուսու-
ցանելու այն եղանակը, որ կը հիմնուի ա-
ռանձին ուսուցիչներու հեղինակութեան եւ
զատողութեան վրայ» եւ որ, այս պատճա-
ռաւ «ունի շարժուն հիմ մը, որմէ յառաջ
կու գան զանազան գաղափարներ, ոչ առանց
մեծ ջնասի քրիստոնէական գիտութեան» ¹
կ'ուզենք, կը պատուիրենք, կը հրամայենք
որ անոնք որ պաշտօն ունին սրբազան
աստուածաբանութիւնը սորվեցնելու Համա-
լսարաններու, մեծ ուսումնարաններու, վար-
ժարաններու, վանքերու, հաստատութիւն-
ներու մէջ, որոնք առաքելական Ծնորհագի-
րով իշխանութիւն ունին տալու ակադեմա-
կան աստիճաններ եւ վարդապետական վկա-
յագիր, իրենց դասերուն իբրեւ բնագիր ու-
նեան Աստուածաբանական բովանդակութիւնը,
եւ զայն մեկնեն լատիներէն լեզուով, եւ ե-
ռանգով հոգ եւ խնամք տանին իրենց ուն-
կընդիրներուն մէջ անոր նկատմամբ ամենա-
մեծ սէր մը արթնցնելու: Այս բանս արդէն
գովելի կերպով կը կատարուի շատ Հաստա-
տութիւններու մէջ. կրօնական Կարգերու
կարի իմաստուն հիմնադիրները ուղած են որ
իրենց ուսումնարաններուն մէջ ա'յսպէս ըլ-
լայ՝ Մեր Նախորդներուն ամենամեծ հաւա-
նութեամբը. եւ Սուրբ Թովմասի ժամանակ-
ներէն ետքը եկող սուրբ մարդիկ, զայն միայն
բիրն իրենց վարդապետութեան ուսուցիչ:
Այս կերպով եւ ոչ ուրիշ եղանակաւ, աստ-
ուածաբանութիւնը, ոչ միայն իր առաջին
փայլը պիտի վերստանայ, այլ եւ սրբազան
գիտութիւններուն պիտի տրուի նորէն իրենց
կարգը եւ արժէքը, եւ իմացականութեան եւ
մտքի վերաբերեալ ամէն բան նոր ուժերով
պիտի ճոխանայ:

Այս պատճառներուն համար, ապագային
ոեւէ Հաստատութեան պիտի չչնորհուի՝ սրբ-
բազան աստուածաբանութեան սկզբնա-
կան աստիճանները տալու իշխանութիւն,
եթէ մեր այս տեղ հրամայածը սրբութեամբ
չպահէ: Գալով Հաստատութիւններու եւ Հա-
մալսարաններու, նոյն իսկ կրօնաւորական

¹ Bulla Mirabilis Deus d. d. 11 april, an
MDLXVII.

² Acta Cap. Gen. O. P., t. IX, p. 196.

¹ Leonis XIII, Epist. Qui te, dat. die XIX. Ju-
nii, 1886.

կարգեցան եւ Միաբանութիւններուն, որոնք արդէն օրինաւորապէս իշխանութիւն ունին տալու այս տեսակ ակադեմիական անորձանոյնը, կամ Գեորգիոսի վկայականներ, նոյն իսկ լոկ իրենց ընտանեկան սահմաններուն մէջ, ոնկէ պիտի զրկուին, եւ իբրեւ արդէն զրկուած նկատուելու են անոնք որ, երեք տարի ետքը, ունէ պատճառով, նոյն իսկ ոչ կամաւոր պատճառով կրկնադարձեան հպատակած պիտի չըլլան Մեր ներկայ հրամանին: Եւ կը սահմանենք զայս հակառակ տմէն ներհակմաներու:

Տրուած Հոռմ, Սուրբ Պետրոսի մէջ, 1914 Յունիս 29ին, Մեր Քահանայապետութեան 11երորդ տարին:

ՊՈՍ Ժ. ՔԱՀԱՆԱԹԱՊԵՏ

ՀԻՆ ԿԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՆԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒՑ ԻԵՄ

(1827 — 1830)

Չարչանկա 14.— Փաթրիք թէքրարէն սայրը էմնաֆլարտան օլանլարը չաղըրըպ, օնլարա տա պու նասիխաթը վէրտի, իւրքն օպիր էմնաֆլարա էթտի կիպի:

Բերչեկսկ 15.— Պիր տէրտէր իլէ պիր չուհատար վարտըլար քույումճըլարըն լօնճա օտաւընա վէ ըսմարլատըլար քաթօլիկ օլան էվ սահիպի քիմ վարըսա էվլէրիին հէօճէթլէրին կէթիրսիլէր, զիրա էվլէր մէզաթ օլույօր. պու պապտէ իւր տըլըզ էվլէրի սաթըն ալան՝ սալթ միւսլիմանլար օլտու, էնճամ միւսլիման էլի իլէ էրմէնիլէր պաշլատը սաթըն ալմազա, նիճէ սըրտը կէտիքտէ նաքիւնի իտէճէիլ, Կէլէլիմ քի Ղալաթա, Պէյօղլու վէ Պօղազ իշի թարաֆըրտան այրը եէրլէրտէ քաթօլիք էվլէրի սաթըլմատը, նիճէ Օրթաքէօյտէ օլան քաթօլիք էվլէրի:

Ճումաս 16.— Տէվլէթ քաթուտունտան ըէիա էֆէնտիտէն խապէր կիթտի. Հալէպիլէրէ Պէյօղլունտան չըքսընլար Բեռհաթհանէյէ վարսընլար հալա թէպտիլի տէյի. ֆաթա Ղալաթա մօլլատընտան թէզքէլէօսլըպ կիթսիլէր, օ տա զէնկին օլան քիմ իտէ. ֆուքարալար կիտէճէք օլուրտա, հիւնքեսար աթրարը չայըրա չըքաճաքտը. պու սէպէպէ եսսաք օլտու Բեռհաթհանէյէ քիմսէ վարմասըն տէի. Պու խուսուս պիր թաքըմը քալտը Պէյօղլունտա, պիր թաքըմը պաշլա սէմթլէրէ վարտը, չուն պուշլարտ վօր եօղուտու քաթօլիքէր կիպի. պուտուն մատա հէր թանղըրըն կիւնիլ ժամկոչլար, տէքտէրլէր վէ մահալլէ քէհեսաք քաթօլիք էվլէրինէ կիտիպ վէ սօքաք տրալտիքնտա տուրուպ պաղըրըլարտը. փատիշահ աիւշմէյէրի, եարընատաք չըքմալըրընըզ էվլէրտէն, եօքսա սիզէ չօք շէյ իտէճէիլ, վէ ըէզալէթ, քէմ սէօղլէր հիսապա կէլմէզ տշտը թաշտը:

Բերչեկսկ 22.— Տէվլէթ քաթուտունտան տէֆա պույրուլթու կիթտի բուս փաթրիինէ մութլաքա Հալէպիլէր սանա միւթիւ օլմալը տէյի:

Բազար կիւն Բազալիս, մաս 25.— Ինթիսապ ազապընտան չաղըրըլար պիր քաշ տտէմլէրին ֆամիլիալէրի վէ թէնպին օլտու օնլարա, մութլաք պու կիւնտէն բէրչէնպէ աքչամընատաք եօլա չըքմալըրընըզ, օ ֆաթըրլար չօք նիազ իթաիլէր տէմէ իլէ. էֆէնտիմ ինայէթ էտին պու կիւն Բազալիս տըր պիզէ. օնու թէքմիլ իտէլիմ տէ պատէնու հաֆթա պաշընտա տուրմալըպ կիթէրիզ. աղա աիյնէմէյիպ օնլարա, զօրա քօտու:

Չարչանկա 28.— Պիր տէրտէր իլէ պիր չուհատար վարտըլար քույումճըլարըն լօնճա օտաւընա վէ ըսմարլատըլար քի 20, 30 քիչիլէրին էվլէրի սաթըլտը, վարսընլար քէհեսապէյին քօնաղընտան աքէլէրինի ալընլար. զիրա պաշլանտը արալ արտա էվլէր սաթըլմազա, էկէր սաթըլան էվլէրին տիէթլէրինի աղնամաք լազըմբա, 100 քէսէլիք էվլէր 10 քէսէյէ սաթըլտը, 50լիք պէյէ. պուն:

լարտան աշաղը օլանլարընը սաթտըլար հիշ փահա իլէ, 300 դրուշատաք, չէօլէ քի ինսաֆ պիւթիւն պիւթիւն քալքմըլըտը:

Ճուռնաա երթեալի 31.—Փաթրիկ պիր ժամկոչ իլէ քալազ կէօնտէրթտի վէ քալտըրթտը Արդարեան Տիրապէթրիլի օղլու թէլլալ Ստեփանը, քիւրքճի Գիրքոր իլէ Ստեփան իքի քարտաշլարը, Բէօթահեալը քազազ հաճի Դաւիթի, թէրզի Յուսէփ իլէ թէրզի Մինասը. պոռնլարը կէօթիւրտիւլէր տօղրու փաթրիքհանէյէ. ծնտա հապս իթտիլի:

Բազար կիւն Նիսան աշր 1. — Փաթրիք Օրթաքէօյ քիլիսէսինտէ վէ ախէր վարթապետլէր օլտուքլարը քիլիսէլէրտէ պաշլատըլար վազ վէրմէյէ տիւշկիւն սէօզլէր իլէ. սէօզլում հապանա ճշմարտութիւն քարոզու. լաքին իլք վէրտիքլէրինին աքսիսինի էրթէ հաֆթա իճրա էթտիլէր, մապէյնլէրինտէ խուսուռմէթ օլտուղունտան վէ ժամա կիտէն քաթօլիքլէրին պիր թաքըմը իշիթտիքտէ պոռմիսիլ րապուլթաղը քարոզլարը, օլան մահալլէրինտէն տէտիրկին օլտուլար, իլլա Օրթաքէօյտէ օլան Ասվատուր եպիսկոպոս ըտը. աշգըրը իշ թուլթան քի քաթօլիքլէր կէրի չէքիլտիլէր ժամտան. փաթրիք տէ Ասվատուրու մէն էթտի քաթօլիքլէրի իւրքիւթտիւ տէի, վէ բազարտան բազարա իքինճի պատարազ փէյտահլատը քաթօլիքլէր իշին քի ծնլարըն կէօնիւլլէրինի քէնտիսինէ ճէլպ էթսին տէի, չի ֆայտա էրմէյի ճէմաաթը չիշտի պու իճատա թա ծնու մէն իթթիլինճէ:

Չարշանպա 4.—Չամիչ օղլու քուլումճու Բէվորքու, Պէնլի սիմքէշ Բափայէլեան Վիչէնին 4 էվլատլարընը՝ Յուսէփի, Տիմթէտու, Պետրոսու վէ Յակոբու քալտըրտըլար միւքսիւր աղայա քէզա պալատէ գիքր օլան 7 քիշի փաթրիքհանէտէ հապս օլանլարը տա կէօթիւրտիւլէր միւքսիւր աղայա թէսլիմ իտտիլէր:

Բեքլեպէ 5.— Պու կիւն լազ Յովակիմ համալ պաշը տաւատընը չուպուքճու Պօղոսու վէ խօրասանճը օղլունուն հէկէնի Արթինի քալտըրտըլար միւքսիւր աղայա:

Ճուռնաա 6.— Հանըմ օղլու եէկէնի սիմքէշ հաճի Մըքայէլի, Սախտեան Մեկքոնու.

վէ քարտաշը սատէքեալ Արթինի վէ չուպուքճու Պետրոսու քալտըրտըլար միւքսիւր աղայա:

Ճուռնաա երթեալի 7.— Հաճի Ամբո քարտաշընը քուլումճու Վիչէնի քալտըրտըլար միւքսիւր աղայա: 1

(Շարունակելի)

1 14 Դշ. Պատրիարքը ուրիշ տահա էսնաֆնէրէն եւ փողերանոցէն մարդ կանչել տուաւ, անոնց ալ աշպէս խրատական խօսքեր ըսաւ:

15 Եշ. Մէկ տէրտէր մը եւ մէկ չուխատար մը կ'երթան խուլումճիներուն լօնճա օտաւին կ'ապըսպրեն «Տէր նէ դատար քաթօլիկ էվ սահապլարը վար ըսա հէփսիտէ սէնէտլէրինի կէթիլսինլէր, քաթրիքհանէյէ պրաքսընլար, դէրէ օ էվլէր սաթըլըյօր վէ սաթըլաճաք»:

22 Եշ. Կրկին տէրութեան դռնէն Հոռմի Պատրիարքին հրաման գնաց, հալէպցիները իրեն իթահաթ ընեն եւ Հոռմի եկեղեցին երթալու են. Պատրիարքը կրկին փէք աղէկ ըսելով իղմազ ըրաւ:

25 Կիր. ԻՏթիսապ աղասին քանի մը ֆամիլիա կանչել տուաւ որոնք որ ֆամիլիայով աքսորուած էին ետ մնացին, ըսաւ անոնց ձուն ձմեռ է ըսելով չի դացին հիմայ ժամանակը լաւցաւ, մուլթաք մինչեւ հինգշաբթի երթալու էք, բէք աղէկ ըսելով մինչեւ աս օրս մնացին:

28 Դշ. Մէկ տէրտէր մը չուխատար մը կու գան չուխաճը խանը լօնճա օտաւին կըսեն, թախըմ մը տուն ծախուեցաւ գան նային որինն է նէ առնեն ստակնին:

31 Եք. Պատրիարքը մէկ ժամկոցով մէկ խաւաս մը խաւրեց, այս մարդիկը վերուցին տարին պատրիարքարանը բանսը դրին որք են արդար Ստեփան, քիւրքճի Գիրքորը, եւ աղբարը Ստեփանը, քէօթահեալը հաճի Դաւիթը, թէրզի Յուսէփը, թէրզի Մինասը:

Եւ այս միջոցիս Պէզճեան Յարութիւնը որ փողերանոցի եւ ճէպու հիւմայունի ստակ բռնող ըլլալով, աս տեղաց մեծը ըլլալով կանչեց ան տեղի մեծ վարպետներէն մէկը ըսաւ, գնա հիմայ թէֆտէր ըրէ եւ հարցուր ամենուն թէ ժամ պիտի երթան մի չէ մի. եկաւ ամենուն հարցուց ով որ պիտի չերթամ ըսաւ նէ անունին գրեց, գացողին եւ երթալու եղողին բան չիկայ, եւ տարաւ իրեն տուաւ թէֆտէրը եւ յետոյ ըսաւ ան թէֆտէր գրողին, գնա ժամ երթալու չեղող մարդկանց ըսէ՝ թող երթան հոս անանկ մարդ բան չունի, այն իրկուունը ամէն մարդ ով որ ժամ պիտի չերթար նէ ելան փողերանոցէն ժամը դացողը կեցաւ:

Այս մարդիկը ներսէն ելան յետոյ որը հայոց ժամը գնաց նէ կրկին ներս առաւ խուսուրներն ալ շատը աղբատ մարդիկ ըլլալով պօշ ժուռ կու գա-

յին, պապիսին րաստ կու գար ճամբան, եւ շատ ալ կ'երթային կը պէքէնէն ճամբան, Պէզճեանը տեսնելու, որ չարէ մը ընէ տէյի, երբոր կը տեսնար նէ, որին կը սրթողէր կը վռնտէր, որին ստակ կու տար ըսելով ես ի՞նչ ընեմ, գացէք մտածեցէք որը բարի է նէ ան ըրէք, ձեր ձեռքն է առ բանը, ես ինչ ընեմ. ըսել կ'ուզէր որ գացէք հայոց ժամը յետոյ կրկին ես զձեզ կ'առնեմ, զէրէ ինք ալ գիտէր որ ասոնցմէ աստուածաժախ մարդ չեմ կրնար գտնալ, անոր համար աս ձեռք բռնեց, պարի հիւ չէ նէ սէյրի համար գացէք որ ազգը տեսնայ. փողերանցի մէջ երկու հոգի կաթօլիկ ժամ չի գացող շէհրիցի միաց, ասոնց համար ալ էջ էն խղճահար էն ըսելով, մէկն ալ էնկիւրցի էր, անոր ալ բան ունի երբոր բանը լինայ նէ այն ժամանակը ճամբեմ պիտոր ըսելով, հալիին բերանը գոցեց, այս բանս առանկ ըլլալը զանազան վարպետութիւններ են Պէզճեանին ըրածը, բայց աս միտքը մենք գիտենք, ուրիշ չիտէ, երկուս ըլլալուն համար, չի գրեցի, բայց որ կուգայ նէ բերնով կը խօսինք, եթէ Աստուած ուղ պահէ նէ:

Այս միջոցի մէջ պէյօլլուի չեղող աղքատ մարդոց հայք շատ նեղութիւն կուտային տուն, տէրտէրներ վոյվօտայի եասախճի, մահալէյի քէհեան պատեղով կանչվաւով կ'ընէին. «Բատիշահ տիւրմանլարը սապահ չըգմարընըզ եօղսա րուպարընըզը, վէ չօլուք չօճու գլարընըզը սօքաղա պրագըրըզ». եւ տահա շատ գէշ խօսքեր որ բերան չառնուիր որ գրեմ, նէ տեսնողին, նէ լսողին քար ըլլար սիրտն նէ չէր դիմանար:

1 Ապրիլ եիր. Պատրիարքը Օրթոգքի ժամը եկաւ եւ ամէն կիրակի ալ կրնամ ըսել մէյ մէկ ժամ կ'երթար ճշմարտութեան վրայօք քարոզ կուտար, եւ ուրիշ վարդապետներն ալ իրենց եղած ժամերը քարոզ կուտային, թօաֆը ան էր որ մէկին ըսածը ու տուածը մէկզմէկու չէր ըմբաներ եւ տուած քարոզին ալ զօռաքի էր:

4 Դշ. Չամիչեան ֆիվորքը, Պէնկիլի օղուլարը չորս եղբայր միատեղ Յուսէփը, Իգնատիոսը, Պետրոսը եւ Յակոբը եւ վերի ըսած վեց հոգին որ Պատրիարքարանն էր անոնք ալ միատեղ միւզ'ւր աղան բանտը դրին:

5 Եշ. Լազ օղլու մուսահեաճի Յովակիմը, Չուխաճի Պօղոսը, Խորասանճիին եէկէնը Յարութիւնը Միւզիւր աղան բանտը տարին. իշտէ տուած քարոզներուն պուտուղը, որ ճշմարտութիւն միշտ կը քարոզեն:

6 Ուր. Հանըմ եէկէնի հաճի Միքայէլը, սատեքեար Յարութիւնը, եղբայրը Մեւքոնը, չուպուհաճի Պետրոսը, Խուլուսմաճի Վիչէնը Միւզիւր աղան բանտը տարին:

Այս միջոց խաբուսի Ահմէտը, Խալաթիայի Նաւըրը ըրաւ տէրութիւնը վոյվօտայի բառուրութեան ժամանակի մանսուպ ըլլալով, աս անունը վերցրին:

եւ աս թապիրը ըրին նազը ըսելով եւ ամէն տեղի խառնուելու իշխանութիւն տուին: Եւ միտք բանին ան էր, պէյ օղլուի չեղող աղքատները, զօրաքի հանէ, Քրէնկի եկեղեցի գացողները բռնէ բանտը դնէ. բայց այս Դարդն բանիբուն յարդ ըլլալով չըրաւ քէշ բան, ըրածն ալ բան չէք. կրնամ ըսել որ զօրաքի էր, հայք այս մարդս այս բայէյին հասցուցին վերի ըսած բաներս ընէ տէյի, շատ ստակ եւ հէտիյէ տուին, բայց ժամանակս գիտնալով Խուլլանմիշ եղաւ, քէշութիւն աղքատաց չընէին ի զատ Ֆայտան ալ դաւաւ, ու գիտացկուս ուղղափառաց միշտ կ'ըսէր գաղտուկ եւ միշտ կը ցաւէր ու կը միթարէր ըսելով «Ալլահ քէրիմ տիր, տիւշինմէյին, ոսնու կիւզէլ օղլուր, պու տա կէշէր վէ էտէնլէր պուլաճաքլար տըր, տուվա էտին քի պիր պէն պէօյիւյէյիմ». եւ այս մարդուս հայք պէյ օղլուի Մաթօս աղային տունը առին հէտիյէ տուին, միտքերնին աս էր, աղէկ նայէ ու ինչպէս որ պէտք է նէ քաթօլիկները հալածէ իրենց պէս, յետոյ ժամանակ անցաւ աս մարդս խաբուսի բաշա եղաւ:

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀԱՊԻՆՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

ԳՐԻՄ Ա.—Ի. Ի. Ի.—Մանուկ մտածութեան վրայ:

Շատ շուտ պիտի հասնի ինք մահը, օհ'ս ուշեմն րի ի՛նչ վիճակի մէջ ես. մարդն այսօր կայ ու վաղը չ'եւեիր:

Իսկ երբ աչիկ կորուսի, իր յիշատակն ալ շուտով կը ջնջուի մօխ:

Ո՛հ, ո՛րչափ մեծ է մարդկային սրտի անզգայութիւնն ու խառնութիւնը, որ միայն ներկայ քաները կը մտած եւ գալիքները գրեթէ քնաւ չի նախատես:

Ամէն գործերուդ ու խորհուրդներուդ մէջ ա՛յնպիսի վատնելու էիր իբրեւ րի այսօր մեռնելիք ըլլայիր:

Երբ մահու խղճմտանք ունենայիր, մահուընէ շատ չէիր վախճար:

Լաւ եւս կ'ըլլար մեղիք գգուշանայ, քան րի մահեմ փախիլ:

Երբ այսօր պատրաստ չես, ի՞նչպիսի վաղը պիտի ըլլաս:

Վաղը՝ անսոյց օր մըն է, եւ ի՞նչ գիտես որ վաղուան պիտի հասնիս:

ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ

Սուրբ Գեորգ, աշխարհահռչակ վկան, ծնուա կոպ. պապով կ'իյ մէջ. Ե իր ազնուական ծնողաց կողմէ պըզ:

տիկոնք Թրթուեցաւ քրիստոնէական կրօնքի մէջ: Դեռ չափահաս չեղած պատերազմի գնաց և հոն ցոյց տուած արիւնթեան շնորհիւ զօրավար անուանուեցաւ կայսերական բանակին մէջ: Դիոկղետիանոս կայսրը շատ մեծ համարում և համակրութիւն ունէր Գէորգի մասին, և անոր քրիստոնէայ ըլլալը չգիտնալով միտքը դրած էր ծառայեցնել զայն իր ամենամեծ ձեռնարկներուն մէջ:

Դիոկղետիանոս որոշած ըլլալով քրիստոնէութիւնը բնաջինջ ընել, իր միտքը յայտնեց անգամ մը իր ժողովքին, ամէնքը գոչեցին իր դիտաւորութիւնը, միայն Գեորգ զէմ կեցաւ, նկատելով որ անիրաւ էր այն և հակառակ ճշմարիտ Աստուծոյ, զոր բոլոր սրտանց կը սիրէր և որուն փառքին համար կեանքը զոհելու պատրաստ էր: Կայսրը և բոլոր ժողովականները Գէորգի խօսքերէն հասկցան անոր քրիստոնէայ ըլլալը:

Շատ Զանացին Գէորգին միտքը փոխել անոր յիշեցնելով ընդունած բարիքները, և բնդուելիք պատիւները և միանգամայն այն տանջանքները, որոնց պիտի մատնուի եթէ անոր կամքը չկատարէ:

Գէորգ այս խօսքերէն երբեք չդեղեցուեցաւ և Դիոկղետիանոսին դառնալով անոր ըսաւ թէ Դո՛ւն պէտք է որ ճշմարիտ Աստուծոյ ճանչնաս և զանիկայ պաշտես և դադարիս անոր ծառաները հալածելէ: Երբ հետեւ ո՛չ թէ քու կուռքերդ, այլ ան է որ քեզի պարգեւած է այդ թագաւորական մականը: Անկարելի է ըսել թէ ինչպիսի կատաղութեամբ բորբոքեցաւ կայսրը. հրամայեց իսկոյն որ զանիկայ բռնեն բանտը նետեն: Սուրբ բանտը տարին, շղթաներով կապեցին, գետինը պառկեցուցին և մորմնին վրայ խոշոր քար մը գլորեցին զայն լոսելու և ջախջախելու համար:

Երկրորդ օրը դարձեալ հանուեցաւ Դիոկղետիանոսի առջեւ: Այս իշխանը տեսնելով թէ Քրիստոսի անվեհեր վկան բնաւ միտ չի գնէր իր խօսքերուն, հրամայեց որ սրածայր պողպատէ սայլերով շինուած անուռի մը մէջ նետեն զայն: Գէորգի մարմինը փշուռեցաւ անուռին մէջ. կայսրը այս բանն տեսնելով սկսաւ բարձրաձայն աղաղակել. Ամէնքնիդ ալ զիսցէք որ Ապողոնէն, Պոսիդոնէն, Հերակլէսէն, Իիսուսէն և Մեծ Արտեմիսէն ուրիշ Աստուած չկայ արդ ո՞ւր է Գէորգի աստուածը. ինչո՞ւ չեկաւ չփրկեց զանիկայ իմ ձեռքէս: Եւ հրամայեց որ այնպէս թողուն զանիկայ տանջարանին մէջ և գնաց:

Բիշ վերջը, որոտման պէս ահագին թնդիւն մը լսուեցաւ և երկինքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր. Գէ'որգ, քաջալերուէ՛. մի՛ վախճար. շատերը քեզմով պիտի դառնան: Զինքը պահող դահիճները ահագին խնդրէնէն ստորափած փախան գոչելով. Մեծ է Քրիստոնէից Աստուածը: Եւ Աստուծոյ հրեշտակը իջաւ հանց Սուրբ տանջարանէն և անոր մարմինը բժշկելով ողջունեց և ըսաւ. Գէ'որգ, ուրախացի՛ր, հաւատարմ' անոր որ քեզ կը զօրացնէ, ի գլուխ հանէ քու

ընթացքդ. որովհետեւ մենք հոս կը սպասենք խոստովանութեան պատկը առնելուդ:

Սուրբ Գէորգ ուրախութեամբ գոհութիւն մատոյց Աստուծոյ և ելաւ գնաց Ապողոնի կատարունը և տեսաւ որ կայսրը և իր իշխանները զոհ կը մատուցանէին: Ս. Գէորգ կայսեր ձօնակալով ըսաւ. Արքայ՝ ճանչցիր զիս և ինձմով իմ քարոզած Աստուծոս, որ զիս փրկեց քու ձեռքէդ և այն մահաբեր տանջարանէն զոր զիս մեռցնելու համար պատրաստեցիր: Արդ հասկցիր թէ կը մոլորիս այդ կուռքին զոհ մատուցանելով:

Կայսրը Սուրբին նայելով ըսաւ. Դուն ո՞վ ես: Սուրբը պատասխանեց. Ես այն Գէորգն եմ որ քու հրամանովդ անիւի տանջանքին մատնուեցայ և մեռած համարուելով հոն ձգուեցայ. արդ եկած եմ քեզի իմացնելու թէ կրնայ զիս մահաբերեալ զատել իմ Աստուծոս, զոր դուն թշնամանել ուղեցիր: Այն տեսն թագաւորը հրամայեց որ զանիկայ բռնեն. և իր մօտը բերել ապով ստէպ անոր կը նայէր իմաստուն համար թէ արդեօք ճիշդ ա՛ն է. և կ'ըսէր որ կ'երեւի թէ անոր ուրուականն է և մեզ կը խաբէ: Իսկ Մագաքետիոս, կայսեր երկրորդը, կ'ըսէր թէ անոր նման է: Իսկ Սուրբը կը կրկնէր. Ես Քրիստոսի ծառան Գէորգն եմ, մի՛ խաբուիք այդ կուռքէն, յալ գիտցէք թէ Քրիստոս կարող է իրեն յուսացողներուն յարութիւն տալ և զանոնք ձեռքէն փրկել:

“ ԲԱԶՄԱՎԷՊ, Ի ՅՈՂՈՒԱԾԸ ”

Վերսետկոյ Միսիթարեանց Բագնալիկապարբերականին մէջ Վեր. Հ. Ա. գերեան յօդուած մը հրատարակեց՝ Ս. Գր. Լուսաւորչին ի Հռոմ ուղեւորութեան առթիւ իր ըրած գրաքննականին մեր տուած պատասխանին դէմ: Այս յօդուածին ալ պատիւ ըրաւ Մեծնաւա ըստ սովորութեան:

Այս խնդիրը թէեւ հարկաւորէն աւելի երկարեցաւ, սակայն պատշաճ կը դատենք, վերջին անգամ ըլլալով, կարճ տեսութիւն մըն ալ ընել, նկատելով անոր քանի մրօգտակար հետեւութիւնները:

Բնաւ չենք ուզեր և չենք զիջանի՛ր՝ և ոչ իսկ ակնարկել այն անվայել և կրքոտ դիմառնութիւններուն և բացայայտ անձնական նախառնքներուն, որոնց ի սրտէ կը ներենք իսկ, երբէք մտադրած չըլլալով ճշմարտութեան պաշտպանութեան մէջ անձ և անձի յատկութիւնները ի նկատ առնուլ, նուազագոյն եւս՝ նախատել և նշաւակել:

Յօդուածագիրը սակայն իր տաղտկալի շըրջաքանութիւններուն և ծաղրաբանութիւններուն մէջ, — կ'երեւի ասոնց աւելի զարկ մը տալու համար, — մի քանի անգամ գիտունի համբաւ մը կը վերագորէ մեզ, և զոր կ'ուզէ ապացուցանել թէ չունինք. զբաւաստակ կ'ըլլայ. քանզի արդէն ճշմարիտ է այդ, և բնաւ գիտունի յաւակնութիւնը չենք ունեցած և չենք կրնար ունենալ. գոնէ այսչափը գիտենք. և այս ենթադրութիւնը հիմնովին սխալ է, ո՛վ որ ալ կազմած ըլլայ զայն երբեք:

Այսու հանդերձ, իրաց ճշմարտութիւնը առարկայական է, և ո՛չ թէ ենթակայական, որով կախում չունի ո՛չ մենէ և ո՛չ ուրիշէն. բաւական է որ անկեղծութեամբ փնտառուի և լոյսը չմերժուի՝ կամաւոր կուրուսթեամբ:

Արդ, յարուցուած խնդրոյն մէջ, Վեր. յօդուածագիրը երկու բան կը նկատէ. Ա. թէ Ս. Գր. Լուսաւորչի ճանապարհորդութիւնը ի Հռոմ տարակուսական է. Բ. կը վերագորէ մեզ անիրաւ կասկածներ իր Միաբանութեան վրայ:

Ա. — 1. Զարմանալի հակասութեան մէջ կ'իյնայ Վեր. յօդուածագիրը իր ցուցման ամբողջութեանը մէջ: Երբ բարձրաձայն կը քարոզէ թէ մեզի հետ համակարծիք է այս ուղեւորութեան վրայ, այնպիսի եզրակացութիւններու կը յանգի, որով պէտք էր իրեն ուրանալ այդ ուղեւորութիւնը, տարտամ և անյարիր տրամաբանութեամբ: Ուստի վայրապար կ'ամբաստանէ զմեզ թէ իր միտքը չենք հասկցած. պէտք էր ըսել թէ ճիշդ կռահեր ենք կամ մարգարէացիք ենք:

2. Իր յառաջ բերած ապացոյցներէն և ոչ մէկը զօրութիւնը ունի մեր թեզը, ինչպէս կը սիրէ կրկնել դասական ոճով, տկարացնելու: Իբր ամէնէն զօրաւոր փաստ կ'ըսէ թէ Եօր և իղէ դէպք պատմականօրէն ստոյգ ապացուցուելու համար պէտք է որ հաստատապէս գիտցուն անոր գլխաւոր պարագաները՝ անձը, տեղը, ժամկետը, առանց որոց ամէն ոք աղաւթ է չհաւատալու և նոյն իսկ իբրեւ կեղծ մերժելու որ և է պատ-

մութիւն մը որուն այս երեք գլխաւոր պարագաները միանգամայն անյայտ են: Որպիսի տարտամ սկզբունք, զոր իմաստակները պիտի կարենան ուղածնուն պէս քաշքշել. արդէն առանց անձի, տեղոյ և ժամանակի, դեպք չի կրնար ըլլալ: Իսկ բանապաշտները այսպիսի սկզբունք մը կը գործածեն, ինչպէս անէպ ըսինք, ի վնաս կրօնից. Ս. Գրոց շատ դեպքեր այս սկզբունքներով կը մերժեն: Օրինակի համար Մոգերութիւնը կը թաքտալ իմաստ մէջ, մոգերութեան անձը խնդրական է. տեղը՝ նոյնպէս, ոմանք Բեթղէնէ մը դնելով, այլք Նազարէթը. հետեւաբար և ժամանակը խնդրական. սակայն դէպքը այնքան ստոյգ է, որ և ի հաւատոց է: Ուրեմն այս պարագաներուն խնդրական ըլլալը՝ անյայտ ըլլալ ըսել չէ. հո՛ւ է ահա իմաստակութիւնը: Որ յոյժ ցուցանե, ոչինչ ցուցանե (Qui prouve trop, ne prouve rien):

3. Մեր խնդրոյն մէջ անձերն են Ս. Գր. Լուսաւորիչ, Տրդատ, Կոստանդիանոս և Ս. Սեդրէստորոս կամ Եւսեբիոս Քահանայապետ. ժամկետն է՝ շատ հաւանականաբար, 314—315: ¹ Իսկ տեղը՝ Հռոմ է, Հռոմ քաղաքը, որ յիտալիա է, գոնէ ըստ իմացուածոյ մեր պատմաց, մինչեւ որ հակառակը չապացուցուի. Հռոմ՝ որ չէ՝ Երուսաղէմ, չէ՝ Կեսարիա, չէ՝ Սարգիկէ, չէ՝ և ոչ իսկ Կ. Պոլիս:

4. Եւ շատ կը սխալի երբ՝ զմեզ սխալի մէջ բռնած ըլլալու պարծանօք, կը կրկնէ ու կը կրկնէ թէ, Եղիշէի վկայութեան համաձայն, երբ Թէոդոս կայսր ի Կ. Պոլիս փնտռել տուաւ կայսերական դիւանին մատենաներու մէջ և գտաւ ակնարկուած յիշատակարանը, մենք ըսած ըլլալով թէ Հռոմայ դիւաններուն մէջ պահուած հին յիշատակարաններէ ալ Ագաթանգեղոս կը հաստատուի, Հռոմ բառը գործածած ըլլանք փոխանակ Կ. Պոլիս բառին: Ո՛չ բնաւ. մենք Հռոմ բառը՝ Իտալիոյ Հռոմ քաղաքին հա-

¹ Յօդուածագիրն առաւելաբան և խոտելի ամբաստանութիւններէն մին է նաեւ մեզ վերագորել 312թ. ասոնք կ'ընէ՝ անուշադիրները և սգեւորները իր կողմը շահելու համար:

մար գործածած ենք, և հո՛ն է ապացոյցին զօրութիւնը. քանզի այն հին դիւանը որուն մէջ փնտուել տուաւ Թէոդոս, և որուն մէջ գտնուեցան նոյն յիշատակարանք նախնեաց, այդ դիւանը՝ որուն թագու՛մ մասեանները մէջ տեղ բերուեցան, ա՛յն դիւանն և ա՛յն մատեաններն էին՝ զորս Կոստանդիանոս Կայսր բերած էր Հռոմէն (Իտալիոյ Հռոմէն) ի Բիւզանդիոն, երբ 330ին վերջնականապէս զայն մայրաքաղաք ըրաւ:

Ե. Ս. Գրիգոր Լուսաւորչի համար ըսած ենք թէ սնած էր, Բարսեղներու, Նիւսացիներու, Նազիանզացիներու վարդապետութեամբ, ո՛չ թէ ասոնց աշակերտած ըլլալուն համար, — աս տեսակ խեղճ վերագրումներով չէ՛ որ յաղթանակ կը տարուի, — այլ որովհետեւ այդ վարդապետութիւնը Կեսարիոյ Եկեղեցւոյն վարդապետութիւնն էր, զոր հոն ուսան Ս. Վարդապետք, և որովհետեւ անոնք Հռոմայ Քահանայապետը իբրեւ Գլուխ և Դատաւոր Եկեղեցւոյ քարոզած են, ուրիմն Ս. Գր. Լուս. ալ նոյնն ըրած է, նոյն վարդապետութիւնը սորված ըլլալով ի մանկութենէ ի Կեսարիա:

6. Սակայն Վեր. յօդուածագիրը իր զօրաւոր կարծած հատուածը վերջը ձգած է, թէեւ ան ալ զուրկ է ո և է զօրութենէ:

Ապացոյցանելու համար իր ըսածը կամ չըսածը, — այնքան խառնակ է և տարտամ իր միտքը, — կը խճողէ հին և նոր հեղինակներու մեջքերումներ. զո՛ւր ջան. զի ոչինչ կ'ապացուցանէ: Քանզի անոնցմէ ոմանք մանաւանդ կը հաստատեն Ս. Գր. Լուսաւորչի ծանօթ ուղեւորութիւնը. մի քանին տարակոյս միայն կը յայտնեն այն ուղեւորութեան պատգաններուն վրայ, մէկը կամ երկուքը միայն կը մերժեն, անսպացոյց, չոր մերժում մը: Արդ, մենք ասոնց վրայ արդէն ճառած և ըսած էինք թէ Ժիսականը, մանաւանդ անապացոյց ժխտականը՝ չի կրնար յրսկանը չքայնել: Ամբողջ հայ պատմիչներէն հաստատուած մէկ դէպքը, նոր մէկուն չեմ ընդունիր ըսելովը յօդս չիցնդիր: Տարբեր խնդիր է, երբ նոր դրական ապացոյցներ յերեւան գան, ինչպէս, օրինակի համար

Սորենացիի պատմած մի քանի դէպքերուն մէջ անոր դարաւոր ճոխութիւնը քանդեցին հին և ստուգապատու մատենագրաց բոլորովին տարբեր պատմութիւնը, կամ նորերս հողէն հանուած ասորական կղմինտրեայ դիւաններ և վերջերս գտնուած բեւեռագիրներ, ևն.: Արդ վերոյիշեալ ուղեւորութեան մասին քնաւ նոր ապացոյց մը չկայ, այլ միայն ոմանց կամայական մերժումը: Ուստի այս ուղեւորութիւնը սոյոգ է, մինչեւ որ հակառակը չապացուցուի:

7. Եւ ո՛րքան խեղճ և ապիկար ըլլալու է մէկուն ցոյցը, երբ նա կրճէ տարուելով յանձն առնու ըսել և յեղեղել, ինչպէս կ'ընէ Վեր. յօդուածագիրը, այնպիսի բաներ, որոնք պարզ ողջմտութեան սահմանը կ'անցնին: Մենք Պարոնիոսի՛ն — որ այս ուղեւորութիւնը չի մերժեր — տուած ըլլանք հերետիկոսի, բողոքականի վերագրիւններ... մենք դատապարտած ըլլանք երջանկայիշատակ Ագարեան Պատրիարքը, որովհետեւ նա գոված է եղեր Ֆ. Նէվի գեղեցիկ գիրքը, որուն մէջ այս հեղինակը ըսեր է թէ եղած են հեղինակներ որ տարակուսեր են այս ճամբորդութեան և դաշանց վրայ¹:

Այս ո՛րպիսի անտրամաբանութիւն. ասոնք են յօդուածագիր Հօր գէնքերը. պարզապէս զայրոյթի բանդագուշանք. օ՛ն անդր: Եթէ գոնէ՛ այդչափն արժէր, պէտք էր ըսէինք.

J'ai vu l'Agésilas
Hélas!
Mais après l'Attila
Holà!

8. Անցողակի դիտողութիւն մը ընել կ'արժէ նաև այն պնդումին վրայ զոր կը կրկնէ Վեր. յօդուածագիրը իր յառաջ բերած մի քանի հեղինակներուն և ուսանողական հաստատութիւններու Կարողիկէ ըլլալուն մասին, ատկէ ոյժ մը առնելու համար, զոր

¹ Ինտեքէ՛ք որ այս հեղինակներու շատերը կեղծ Դաշանց թուղթին համար կը մերժեն նաեւ Ուղեւորութիւնը. ո՛րքան տարբերութիւն կայ սակայն այս երկուքին մէջ:

օրինակ, Ֆրայպուրկի համալսարանին, անոր պատմութեան ուսուցիչին վրայ, ևն: Մենք անձերը դատելու իշխանութիւն չունինք. բայց Ս. Աթոռոյ դատաստանը մեզի համար ո՛չ միայն մեծարելի, այլեւ պարտաւորիչ է: Արդիականութիւնը, զոր անհղապէս դատապարտեց ողբացեալ Քահանայապետն Պիոս Ժ., ուսկից ելաւ. ազդեցութեամբ բանապաշտութեան՝ կաթողիկէութեան ծոցէն, ի Գերմանիա, կաթողիկէ համալսարաններու մէջ, կաթողիկէ ուսուցիչներէն. ապա անցաւ նաեւ ի Գաղղիա, յԱնգղիա, ևն. և Ս. Քահանայապետը ստիպուեցաւ մաքրել մինչեւ իսկ կղերանոցներ և հսկել անոնց վրայ. քանի՜ քահանայ և կրօնաւոր դասատուներ պարտաւորեցաւ պաշտօնանկ ընել իրենց անհեղեղ մոլորութիւններուն համար, յառաջացած սաներ վտարել ևն. ասոնք բոլոր պէտք է գիտցուն, մանաւանդ Պաւլէրայի այն հաստատութեանց համար. որոնց միտն մէջէն դեռ երկու տարի չէ, հոգեւոր իշխանութիւնը վտարելու ոտիպուեցաւ պաշտօնական ուսուցիչ վարդապետը: ... Ասոնց շատը հետեցին և դժբախտ վախճան ունեցան, ինչպէս Հ. Թիրէլ, Լուազի, Մուրրի, են: Ուստի պէտք է գիտնայ Վեր. յօդուածագիրը, որ այդ անունները վստահելի յանձնարարականներ չեն, ընդհակառակն: Երեւելի Գեր. Տիւչէնն ալ եկեղ. Պատմութիւն գրած էր, այն երկը կղերանոցներու մէջ դասագիրք էր. այն երկը սակայն դատապարտուեցաւ. պէտք է գիտնաք թէ ինչո՞ւ. որովհետեւ առաջին դարերու եկեղեցական պատմական ծանր դէպքերը՝ է՛ զի թեթեւութեամբ կ'ուրանար, է՛ զի տարակոյսի մշուշով կը պատէր, և է՛ զի անթաքչելի սկեպտիկութեամբ կը ծաղրէր... անա՛ արդիականը. բայց նա հնազանդեցաւ վճռոյն, այս խոնարհութիւնը ունեցաւ: Հիմա պէտք է հասկցուի ուրեմն թէ մենք ինչո՞ւ — ամենէն նուազը — ցաւ կը յայտնենք անոնց մասին, որոնք առանց ապացոյցի, յախուռն, աններելի անտարբերութեամբ և առանց ո՛ր և է հարկի՝ պատմական եկեղեցական դէպքերը կա՛մ կ'ու-

րանան կա՛մ տարակուսի տակ կը ձգեն: Այսպիսիներուն, մանաւանդ այսպիսի քահանաներու և կրօնաւորներու է որ երջանկայիշատակն Պիոս Ժ. դեռ շատ քիչ առաջ խրատներ խօսեցաւ, զոր մենք ալ մեր այն յօդուածին մէջ յառաջ բերած ենք:

Այս ամենէն կը հետեւի թէ Վեր. յօդուածագիրն ապացոյցի մասը ոչինչ է:

Բ. Վեր. յօդուածագիրը կ'ամբաստանէ զմեզ թէ՛ Ժամանակէ մը ի վեր(?!), մեզի «ունակութիւն ըրած ըրանք Վենետիկ Միսիոնարեան Միաբանութեան կրօնից անբողոքութեան, անբողոքութեան ու անկեղծութեանը չարակիւս երկբայութեանց ենթարկել»:

1. Քա՛ւ լիցի, չափազանց է այս ամբաստանութիւնը և անճիշդ և անտեղի: Հոս ալ պէտք է ըսեմ. «Որ յոյժ ցուցանե, ոչինչ ցուցանե»: Չափազանց եռանդ, դարձեալ իրաւունքը ի՛նք խլելու համար՝ միամիտներու կամ տգէտներու առջեւ: Մենք ո՞վ ենք որ Միաբանութեան մը կրօնից վրայ, և այն՝ կրօնից ամբողջութեան, անբողոքութեան ու անկեղծութեան վրայ երկբայութիւններ յարուցանենք, այն ալ՝ չարակիւս! Զմեզ ա՛յն չափ նախատելէ, յանդիմանելէ, ընդ տիղմ քարշելէ վերջը, այս ի՛նչ մեծ դեր է զոր՝ գրչի թեթեւ հարուածով մը մեզ կը վերագրէ Վեր. Հայրը. զարմանք: Եւ ի՛նչ է իր ապացոյցը. որովհետեւ իր յօդուածին մէջ սքողեալ կամ ունակական ինչ ինչ յետին միտքեր նշմարած էինք. անա այսչափ: Խիստ է բանդ այդ:

2. Բայց որովհետեւ Վեր. Հայրը իր Միաբանութեան կրօնից մասին այսքան մեծ և անտեղի ամբաստանութիւն մը չխղճեց բարդել մեր վրայ, և որմէ կը կռահուի որ ինքը ունի կասկած մը... ուստի հարկ անհրաժեշտ է որ այս խնդիրը քիչ մը բանանք. Alea jacta est...

ա. Միաբանութեան դաւանութեանը՝ կամ կրօնքի մասին խորհելու կերպին վրայ քա՛ւ լիցի որ մեր անարժանութիւնը կարենայ նոյն իսկ մտաբերել դատաստան մը ընելու: Սակայն Վենետիկոյ Միաբանութեան մասին Ս. Աթոռոյ աստիճանին դաւանու-

թեան նկատմամբ ձեռք առած նախազգուշութիւնները, քննութիւնները, այցելութիւնները, առաջարկները, տրամադրութիւնները, պարտադրութիւնները, վճիռները՝ անշուշտ շարժառիթ և վախճան մը ունէին, ուստի ի՛նչպէս որ Ս. Աթոռէն աւելի իմաստուն չենք, բնականաբար իրմէն ալ աւելի ներող չենք կրնար ըլլալ. ճիշդ իրեն հետ և իրեն պէս կը զգանք, կը խորհինք և միշտ իրեն կը հպատակինք յամենայնի։

